«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Հավելված 1
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
պետական ինստիտուտ» հիմնադրամի
Գիտական խորհրդի
2022 թվականի հունիսի 30-ի թիվ 124-Լ որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ Ինստիտուտ) Նախապատրաստական, լրացուցիչ և շարունակական բաժնի (այսուհետ՝ Բաժին) կանոնակարգը սահմանում է Բաժնի նպատակը, խնդիրները, կառուցվածքը, իրավասությունները, բաժնի ղեկավարի և աշխատողների իրավունքներն ու պարտականությունները և պատասխանատվության շրջանակը:
2. Բաժինը իր գործունեությունն իրականացնում է «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներին, Ինստիտուտի կանոնադրությանը և ներքին իրավական ակտերին համապատասխան:
3. Բաժինը կարող է ունենալ կնիք և ձևաթուղթ:
4. Բաժինը վերակազմավորվում կամ լուծարվում է համաձայն Ինստիտուտի կանոնադրության:

2. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Բաժնի նպատակն է նախապատրաստական, լրացուցիչ և շարունակական կրթական ծրագրերի կազմում, դասընթացների կազմակերպում և համակարգում:
6. Բաժնի խնդիրներն են.

1) Նախապատրաստական, լրացուցիչ և շարունակական կրթական գործընթացի նախապատրաստում:
2) Նախապատրաստական, լրացուցիչ և շարունակական կրթական ծրագրերով ուսումնառության կազմակերպումը, համակարգումը և ամփոփումը:
3) Լրացուցիչ կրթության ամփոփիչ ատեստավորման կազմակերպում
4) Քննական գործընթացի կազմակերպումը:

7. Բաժնի գործառույթներն են՝

1) Նախապատրաստական, լրացուցիչ և շարունակական կրթական և ուսումնական ծրագրերի կազմում և նախապատրաստական աշխատանքների կազմակերպում,
2) Նախապատրաստական, լրացուցիչ և շարունակական կրթության դասընթաց(ներ)ի խմբերի ձևավորում,
3) Նախապատրաստական և լրացուցիչ կրթության դասընթաց(ներ)ի դասապրոցեսի կազմակերպում և վերահսկում,
4) Նախապատրաստական, լրացուցիչ և շարունակական կրթութան դասընթաց(ներ)ի դասախոսական կազմի և դասընթաց(ներ)ի որակի գնահատման վերլուծություն,
5) Նախապատրաստական և լրացուցիչ կրթության դասընթաց(ներ)ի քննական գործընթացի կազմակերպում և վերահսկում,
6) Նախապատրաստական և լրացուցիչ կրթության ատեստավորման գործընթացի կազմակերպում,
7) Նախապատրաստական և լրացուցիչ կրթության դասընթաց(ներ)ի ավարտական վկայականների հաշվառում,
8) Նախապատրաստական և լրացուցիչ կրթության դասընթաց(ներ)ի մասնակիցների սպասարկում, խորհրդատվություն,
9) Նախապատրաստական և լրացուցիչ կրթության դասընթաց(ներ)ի դիմորդների հետ խորհրդատվության վարում,

10) Բաժնի գործունեությանը վերաբերելի ներքին իրավական ակտերի և դրանց փոփոխությունների նախագծերի կազմում և ներկայացում համապատասխան մարմնի հաստատմանը,
11) Բաժնի գործունեությանը վերաբերելի տարեկան հաշվետվության, աշխատանքային պլանների կազմում և ներկայացում, առաջարկությունների ներակայցում,
12) Նախապատրաստական, լրացուցիչ և շարունակական կրթության դասընթաց(ներ)ի մասնակիցներին վերաբերելի ծանուցումների կազմում
13) Նախապատրաստական, լրացուցիչ և շարունակական կրթության դասընթաց(ներ)ի մասնակիցներին վերաբերյալ անհատական իրավական ակտերի նախագծերի կազմում

3. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

8. Բաժնի կառուցվածքը սահմանվում է Ինստիտուտի հաստիքացուցակով:
9. Բաժնի ղեկավարի և աշխատողների աշխատանքային իրավունքների և պարտականությունների շրջանակը սահմանվում է ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ, սույն կանոնակարգով, Ինստիտուտի ներքին իրավական այլ ակտերով, աշխատանքային պայմանագրերով և աշխատանքի նկարագրերով:
10. Բաժնի ղեկավարումը իրականացնում է բաժնի ղեկավարը՝ համաձայն Ինստիտուտի կանոնադրության, սույն կանոնակարգի և իրավական այլ ակտերի:
11. Բաժնի ղեկավարին նշանակում և ազատում է Ինստիտուտի ռեկտորը:
12. Բաժնի աշխատանքները համակարգում է ուսումնագիտական գծով պրոռեկտորը, ում անմիջապես ենթակա և հաշվետու է Բաժնի ղեկավարը:

4. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

13. Բաժնի ղեկավարը և աշխատողները պարտավոր են պահպանել Ինստիտուտում գործող ներքին իրավական ակտերը, սահմանված ժամկետներում, բարեխղճորեն և պատշաճ հետևողականությամբ կատարել Ինստիտուտի ռեկտորի կողմից իրենց տրված հանձնարարականները և կարգադրությունները:

14. Բաժնի ղեկավարը և աշխատողները պատասխանատու են իրենց վրա դրված գործառույթների ժամանակին և պատշաճ կատարման համար:
15. Բաժնի ղեկավարը և աշխատողները իրենց վրա դրված պաշտոնեական պարտականությունները չկատարելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
16. Բաժնի աշխատողները պարտավոր են ապահովել իրենց ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում իրենց հայտնի դարձած տեղեկատվության գաղտնիությունը: Դրանք հրապարակելու դեպքում նրանք պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
17. Բաժնի աշխատողների գործառութային պարտականությունները սահմանվում են պաշտոնի նկարագրերով:

5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

18. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում Ինստիտուտի Գիտական խորհրդի կողմից հաստատվելու օրվան հաջորդող օրվանից:
19. Սույն կանոնակարգում փոփոխությունները և լրացումները կատարվում են Գիտական խորհրդի որոշմամբ: